ՎԻՃԱԿՆԵՐ

Վիճակներ կոչվում են այն քառյակները, որոնք երգում էին աղջիկները Համբարձման տոնի օրը։ Տոնի նախօրյակի երեկոյան աղջիկները հավաքվում էին և որոշում՝ ինչպես և որտեղ տոնել Համբարձման օրը։ Այդտեղ նրանք ընտրում էին յոթ աղջիկ, որոնք մութն իջնելուց հետո մի սափորի մեջ հավաքում էին յոթ աղբյուրի կամ յոթ ջրհորի ջուր։ Սափորը զարդարում էին ծաղիկներով, վրան զնում նշխարք և ծաղկեփունջ, ծածկում քողով և թաքցնում մի որևէ պարտեզի մեջ։ Հետևյալ օրը նույն աղջիկները վերցնում էին թաքցրած սափորը և բերում տոնակատարության տեղը։ Կանաչ արոտի վրա և կամ մի ստվերախիտ մեծ ծառի տակ փռում էին ղորդեր, մեջտեղը դնում զարդարած սափորը յոթն աղբյուրի ջրով լեցուն։ Աղջիկներն ու կանայք հավաքվում էին սափորի շուրջը։ Հավաքված աղջիկները այդ սափորի մեջ ձգում էին մի որևէ առարկա, ձգում էին առհասարակ կոճակներ, մատանիներ, մատնոցներ, բանալիներ և այլն։

Երբ որ սկսվում էր խաղահանդեսը, կանանցից մեկը, որ հմուտ էր վիճակներ գիտենալու մեջ, երգում էր մի քանի քառյակ վիճակներ։ Հետո ծնկաչոք շարվում էին սափորի շուրջը, հանում էին վրայից ծաղկեփունջը և նշխարքը։ Վիճակ ասող կինը երգում էր վիճակներ։ Ամեն մի քառյակից հետո երկու աղջիկ փոխադարձ ձևերերով հանում էին սափորից այնտեղ ձգված իրերից մեկը։ Այդ առարկայի տիրոջն էին վերագրում երգված քառյակի իմաստը, նրա բովանդակությունը։ Աղջիկներից շատերը այդ օրը ծոմ էին պահում մինչև իրենց վիճակը սափորից հանելը։

Վիճակախաղի հանդեսները խիստ տարածված էին թե քաղաքում և թե գյուղերում։ Գյուղերում մինչև վերջերս էլ տոնում էին վիճակների տոնը։

Վիճակները խիստ շատ էին. մեզ հաջողվեց հավաքել հետևյալները.

1

Վիջագ-վիջագ
Վիջգի չիչագ,
Վարթ, մանիշաղ,
Օսկի դոջագ։

2

Վիջագ-վիջագ,
Դեսոք չիչագ,
Վարթ, մանիշագ,
Գարմիր գոջագ։

3

Վիջագ-վիջագ,
Ջերմագ չիչագ,
Լուս արեքագ
Կուլխուն պսագ։

4

Թոռու ծին մուրադ է,
Ջերմազ ծին երազ է,
Թոռու ծին նստեի,
Ուխտին տուռը էշթայի։

5

Գանանչ խոփխան պոնեի,
Գանանչ բախչան ճրեի,
Բիլրիլ ծի հեծցուններին,
Շուղ մուրազիս հասցնեին։

6

Հերու ունեի մեղ կոդի,
Ես դարի էրդու եղավ,
Էրգուսն ալ դուղու խուշ,
Դուշմանիս աչքը փուշ։

7

Ես էրդան խամիշ իմ,
Տուռիդ տայամիշ էղիլ իմ,

Դուդիս աո, գուզիս մի՛ առնուլ,
Ես քու ջաղդիդ կիրն իմ։

8

Վիշաղ-վիշաղ գանչեցին,
Գանանչ մեյդան ծևեցին։
Բիլրիլ ծի հեձցուցին,
Շուդ մուրադիս հասցուցին։

9

Օսկի աղվևնիք ըլայի,
Օսկի սենի դրդրդայի,
Մարդրիտե թել դաբեի,
Ալեմի սուլթան ըլայի։

Կամ

Ես ձագ էի, ջըվրդայի,
Օսկի սենի դրդրդայի,
Մարդարիդե թել շարեի,
Ալեմին սուլթան ըլայի։

10

Մտնուդն էր, մորի կնաց,
Օսկի դացինը ձեռբը.
Քանի քամին քարին գըղարներ,
Գրխադար լուսնինդան ձոցը։

Կամ

Մանուդը բառդիլ է ձառին դաղը,
Ձալ-ձալ օսկին կուլխուն դաղը.
Քանի բալթան ղըղարնե,
Գրխաղա լուսնինդան ձոցը։

11

Մանուդը ձառին դաղը բառդիլ էր,
Ձալ-ձալ օսկին դուլխուն դաղը տրած էր.
Հացն էր էփած, տրած,
Ան քու ջաղդիդ էր կրած։

12

Մինդար մինդարին վրան,
Հրամե, նիստ վրան,
Շուդ ա՛ռ, խարուլ արա՛,
Ձկա չար կամը վրա։
(Ձիկա չոր քամին վրան)։

13

Մինդար մինդարին վրան,
Հրամե, նիստ վրան.
Գանձ պարի կա քու վրան,
Թաթավը ժեն արդին վրան։

14

Վարի գունը կնացի
Պամրագը կզած տրած,
Վերի գունը գնացի՝
Հացը էփած տրած։

Կամ

Վարեն ի վեր դերթալի,
Պամրագն էր կզած տրած,
Վերեն ի վար կուկալի,
Հացն էր էփած տրած։
Քրիստոս իր պերանով ասաց՝
— Ան քու ջաղդիդ էր կրված։

15

Օսկի դթիչք գըթեի,
Արձթե մադարդ զարնեի,
Բարոնաց առչև դերեի,
Խնամիներուն հարդեի։

Կամ

Օսկի գըթիչք պոնեի,
Արձաթ մադարդ զարնեի,
Մադնոց դանեի,
Բարնոց պերևի։

16

Վերեն ինդավ մեքամ պալիք,
Էդավ, սեղանիս տուռը դայնեցավ,
Սուրի սեղանիս տուռը պացվեցավ,
Դաչարիս տուռը զարթարեցավ։

Կամ

Էրգինքեն պալիք ինդավ,
Դաչարիս տուռը պացվեցավ,
Դաչարն արևով լցվեցավ,
Սուրի սեղանը զարթարեցավ։

17

Էրգինքեն մադնի ինդավ,
Էդավ մաղս կամվեցավ.
Ես կիդեի ադն ու մարդրիդ,
Բախտես ճիվահիր պացվեցավ։
[Ես ադու դոճադ կիդեի,
Տալեհես գոհար տարձավ]։

18

Էլլա, նայեցա աշխարհիս վրան,
Տասներդու լուձ լըձված էր,
Ան ալ իմիս նասիբիս վրան,
Իմիս բախտավորութինիս վրան։

Կամ
Էլլա սարի վերա,
Նայեցա դաղի վերա,
Դասներդու լուձ լձաձ էր,
Ան իմ բախտիս վրան էր։
Կամ
Էլլա սարին վրան,
Նայեցա դարին վրան,
Դասներդու լույս ձագեցավ
Էլլող դելվեթին վրան։

19
Բոյըս էրգան է, էրգան է,
Հալավս դահա էրգան է,
Խանե-խանե քալեի
Թողը էրգինք հանեի։

20
Գարմիր ծին էգավ,
Գարմիր մանուգը վրան,
Օսկի ասլիճան գաբիլ է,
Ասձու անունը վրան։
Կամ
Գարմիր ծին ձովեն ինչավ,
Գար մի մանուդ վրան,
Օսկի պաստառ հաքիլ էր,
Ասձո անունն էր վրան։

21
Մեգ ձուդ գա ձովն ի վեր,
Գրդանչե՝ էլլիմ դուս.
Քրիստոս իր պերնով ասաց՝
— Գրհանիմ մութեն լուս։
Կամ
Մեգ ձուդ ունեի ձովն ի ներս,
Գրգանչեր՝ էլլնիմ ի դուրս.
Քրիստոս իր բերնով ասաց՝
— Հանեցեք 'ի մթնե 'ի լուս։

22
Վերի բազարը կնացի,
Հացն էր էփաձ, տրաձ.
Վարի բազարը կնացի,
Պամրաղն էր կզաձ, արաձ։
Քրիստոս իր բերնով ասաց՝
— Աս բու ջաղաքդ է կրած։

23
Աստվաձաձնի թևին գաղ,
Ես տառնայի հրեշտագ,
Աշխարհե-աշխարհ թռչեի.
Աղեգութին անեի։

24
Ես ձառ էի գայնման,
Ամեն ձրղերս լման,
Հարս. մարս ուրախանան.
Ազգգաններս խընդան։

25
Ես հազար նազար էի,
Վաշգիս հեգ բազար էի.
Ամեն օր ասձո հեգ էի.
Ես բախտ հազար ունեի։

26
Նայեցեք քուրեր. եխպայրներ,
Իմ կլխուս դելվեթ պացվեցավ,
Խարախի գուդ ցանեցի,
Վաշդի թուփ բրսնեցավ։

27
Վազեի, վազեի, էշթայի,
Ծուդ մուրադիս հասնեի,
Սուրփ Գևորգ մոմ վառեի,
Ուխտս թամամ գագարեի։

28
Օսկի նավ ունեի,
Արձրթե մերդևեն ուներ,
Խլապտոն յուքլեմիշ էղիլ էր,
Վրգեխ չերթար, օզուղու էր։

29
Էրգինքը բաղռեցավ,
Ասվաձամար էրևցավ,
Տուն, քուրիդս, դուն կնա,
Խընթիրքդ գաղարեցավ։

30
Ջաղ մը թռավ 'ի գրախտեն,
Գրտցին ուներ փսաղ վարթեն,
Պերից կլոխս հաբուց,
Ասաց՝ ընդրյալ ես վաղուց։

31
Վարեն ի վեր գեշթայի,
Սուրբ նշան տիմացս էլավ,
Վերեն ի վայր կուկայի,
Սուրի Սարգիս դիմացս էլավ։
Սիրելի, ո՞ւր կեշթաս՝
— Հաղար դարվան ջամփա։

— Ով որ այն չամփան էրթա,
Նարինչ ու թուրինչ պացվի,
Ով որ ան չամփան պրոնե,
Ասվաձ մեգին հազար դա։

32

Վիշագ-վիշագ,
Վիշգի չիշագ,
Դուն մոլորաղ,
Սուդ հասարաղ։

Այս վիճակներից 8 քառյակ առաջին անգամ հրատարակել է Քերովբե Պատկանյանը[1], իսկ Երվանդ Շահազիզը իր Նոր Նախիջևանի պատմության մեջ զետեղել է տասը քառյակ[2]։ Մեծ մասը լույս է տեսնում առաջին անգամ։

---

[1] *К. П. Патканов.* Нахичеванский говор. СПБ 1875, стр. 114—115.

[2] Եր. Շահազիզ. Նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք. Թիֆլիս. 1902, էջ 173։